## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ԿԱՐ-ԱՎՏՈ» ՍՊԸ-Ի, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱԶԳԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԵՎ ԷՐՆԵՍՏ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 3 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 4 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 6 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 7 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

/Քննության է ընդունվել ՍԴ թիվ 1 դատական կազմի 29.06.2009թ. որոշմամբ/

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հաշվի առնելով, որ «ԿԱՐ-ԱՎՏՈ» ՍՊԸ-ի, քաղաքացիներ Վազգեն Դանիելյանի եւ Էրնեստ Դանիելյանի դիմումի հիման վրա՝ «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 1-ին մասի, 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 6 հոդվածի 1-ին եւ 7 հոդվածի 1-ին մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը եւ ՍԴ-ի կողմից քննության ընդունված՝ «Քաղաքացի Յուրիկ Ավինյանի եւ այլոց դիմումի հիման վրա՝ «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 1-ին մասի, 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 6 եւ 7 հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը վերաբերում են նույն հարցին, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածի՝ նշված գործերը միավորել եւ քննել դատարանի նույն նիստում:

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 5-րդ մասի՝ «Քաղաքացի Յուրիկ Ավինյանի եւ այլոց, «ԿԱՐ-ԱՎՏՈ» ՍՊԸ-ի, քաղաքացիներ Վազգեն Դանիելյանի եւ Էրնեստ Դանիելյանի դիմումների հիման վրա՝ «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 1-ին մասի, 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 6 եւ 7 հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործի դատաքննությունն սկսել 2009 թվականի հուլիսի 14-ին, ժամը 11.00-ին:

3. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 5-րդ մասի՝ միավորված գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Հ. Նազարյանին:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 6-րդ մասի հիման վրա միավորված գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

5. Գործով զեկուցող՝ սահմանադրական դատարանի անդամ Հ. Նազարյանին՝ ուսումնասիրել «ԿԱՐ-ԱՎՏՈ» ՍՊԸ-ի, քաղաքացիներ Վազգեն Դանիելյանի եւ Էրնեստ Դանիելյանի դիմումում ներկայացված միջնորդության հետ կապված հարցը եւ սահմանադրական դատարանին ներկայացնել համապատասխան առաջարկություն:

6. Նկատի ունենալով, որ «Քաղաքացի Յուրիկ Ավինյանի եւ այլոց, «ԿԱՐ-ԱՎՏՈ» ՍՊԸ-ի, քաղաքացիներ Վազգեն Դանիելյանի եւ Էրնեստ Դանիելյանի դիմումների հիման վրա՝ «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 1-ին մասի, 4 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 6 եւ 7 հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերա-

բերյալ» գործով դիմողների նկատմամբ վերջնական դատական ակտով չի կիրառվել դիմումներում վիճարկվող՝ «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածը, ուստի, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածի 1-ին մասի, 32 եւ 69 հոդվածների պահանջներով՝ «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածի մասով գործի վարույթը կարճել:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

30 հունիսի 2009 թվականի
ՍԴԱՈ -60